

ՈՒՂԵՑՈՒՅՑ

9-րդ դասարանի ավարտական քննության

Ուղեցույցի նպատակն է օգնել հանրակրթական հիմնական դպրոցի 2022-2023 ուստարվա 9-րդ դասարանցիներին՝ արդյունավետ նախապատրաստվելու «Ֆիզիկա» առարկայի ավարտական քննությանը և կողմնորոշելու ուսուցիչների գործունեությունն այդ ուղղությամբ:

Քննական թեստը կազմվում է հանրակրթական հիմնական դպրոցի «Ֆիզիկա» առարկայի չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան՝ գործածվող դասագրքերի հիման վրա:

1. Առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Թեստի առաջադրանքները ներկայացված են ընտրովի պատասխանով, կարճ և ընդարձակ պատասխան պահանջող ու պնդումների փնջով:

Ներկայացման ձևը	Առաջադրանքի համարը	Ընդհանուր միավորը
Ընտրովի պատասխանով	1-22	22
Կարճ պատասխանով	23-26	4
Պնդումների փունջ	27	4
Ընդարձակ պատասխանով	28-32	5
ԸՆԴԱՄԵՆԸ	1-32	35

Քննական թեստի առաջադրանքները կատարելուց հետո աշակերտը պետք է լրացնի պատասխանների ձևաթուղթ, որի ճիշտ լրացումից է կախված նրա քննական արդյունքը:

Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելիս տրված 4 պատասխանից պետք է ընտրել միակ ճիշտ պատասխանը և պատասխանների ձևաթղթի տվյալ առաջադրանքի համապատասխան վանդակում կատարել «X» գրառումը (նկ.):

	1	2	3	4
<u>1</u>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<u>2</u>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<u>3</u>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<u>4</u>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Կարճ պատասխան պահանջող յուրաքանչյուր առաջադրանքի (ենթաառաջադրանքի) պատասխանը (բառ, բառակապակցություն, թիվ, թվային արժեք՝ չափման միավորով) պետք է գրել պատասխանների ձևաթղթում՝ դրա համար առանձնացված տեղում (օր.՝ մագնիս, կինետիկ էներգիա, 12, 45 կգ, 21 մ/վ և այլն): **Պատասխանը պարտադիր պետք է բերված լինի միավորների ՄՀ համակարգի, եթե առաջադրանքում լրացուցիչ հրահանգ չկա:**

Պնդումների փնջի յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար տրվում է մեկական միավոր (նկ.): Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 4 միավոր:

27.	1	2	3	4
ճիշտ է:	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>
սխալ է:	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
չգիտեմ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները կատարելու համար թեստ-գրքույկի համապատասխան տեղում պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել առաջադրանքի կատարման ողջ ընթացքը (**կատարվող բոլոր քայլերի գրանցումով, պահանջվող բանաձևերով, մաթեմատիկական հաշվարկներով և պատասխանի ստացումով**): Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները պետք է կատարել թեստ-գրքույկի համապատասխան տեղում (**չեն անցկացվում պատասխանների ձևաթուղթ**):

Աշակերտն ունի սխալ նշած պատասխանն ուղղելու 4 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով, 1-ը՝ կարճ պատասխան պահանջող առաջադրանքների, 1-ը՝ պնդումների փնջի համար: Եթե անհրաժեշտ է փոխել սխալ նշված պատասխանը, ապա պատասխանների ձևաթղթի՝ սխալ նշված պատասխանները փոխելու տեղում անհրաժեշտ է նշել առաջադրանքի համարը և համապատասխան վանդակում գրառել «X» նշանը կամ գրել կարճ պատասխանը:

2. Առաջադրանքների բաշխումն ըստ դասընթացի բաժինների

Ստուգվում են աշակերտի գիտելիքներն ու կարողությունները ծրագրով նախատեսված բոլոր բաժիններից՝ հետևյալ մոտավոր համամասնություններով.

Հ/հ	Թեմա	Միավորներ
1	Մեխանիկական երևույթներ	16
2	Ջերմային երևույթներ	6
3	Էլեկտրամագնիսական երևույթներ	6
4	Օպտիկական երևույթներ	3
5	Ատոմային միջուկի կառուցվածքը	2
6	Աստղագիտություն	2
ԸՆԴԱՄԵՆԸ		35

3. Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները

Առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքների՝ պատասխանների ձևաթղթում ջնջումներով կատարված **ուղղումների համար միավոր չի տրվում:**

Եթե թեստ-գրքույկում բացակայում է ընդարձակ պատասխաններով առաջադրանքների լուծման ընթացքը, ապա պատասխանների ձևաթղթում **միայն պատասխանի գրառման համար միավոր չի տրվում:**

Թեստ-գրքույկը և պատասխանների ձևաթուղթը լրացվում են **կապույտ գրիչով**, իսկ ստուգումը կատարվում է **կարմիր գրիչով:**

4. Աշխատանքի համար հատկացվող ժամանակը

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է 120 րոպե:

5. Ցուցումներ

ա) Բոլոր այն առաջադրանքներում, որտեղ հատուկ վերապահում չկա, թվաբանական հաշվարկները հեշտացնելու և պատասխանների միարժեքությունն ապահովելու նպատակով, պետք է ընդունել. $\pi = 3,14$; $\pi^2 = 10$; $\sqrt{2} = 1,4$; $\sqrt{3} = 1,7$, իսկ $g = 10$ Ն/կգ:

բ) Պնդումների փնջի նմուշ-օրինակ.

27

Ապակե ձողը շփում են մետաքսով: Հաստատե՛ք կամ ժխտե՛ք հետևյալ պնդումները:

- 1) Շփելիս էլեկտրականանում է միայն ապակե ձողը:
- 2) Ապակու և մետաքսի վրա առաջացած լիցքերի հարաբերությունը -1 է:
- 3) Շփման հետևանքով էլեկտրոններն ապակուց անցնում են մետաքսին:
- 4) Շփման հետևանքով ապակու և մետաքսի վրա ի հայտ եկած լիցքերի հանրահաշվական գումարը զրո է:

